

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա

գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

11 ապրիլի 2018թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 19-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԺԵ.00.01- «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ԵՊՀ դեղերի տեխնոլոգայի ամբիոնի հայցորդ Անի Վաչագանի Ղազարյանի «Արմենիկում» մածուկի ազդեցությունը աերոբային թարախային վերքի բորբոքային պրոցեսի ընթացքի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ Անի Ղազարյան
Գիտական ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Հ. Վ. Թոփչյան
Գրախոս՝ Կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Խ. Հակոբյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքի արտաքին գրախոս նշանակելու հարցը:
Զեկուցող՝ Ա. Սադյան
3. 2017-2018 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
Զեկուցող՝ Ա. Սադյան
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԺԵ.00.01- «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ԵՊԲՀ դեղերի տեխնոլոգայի ամբիոնի հայցորդ Անի Վաչագանի Ղազարյանի «Արմենիկում» մածուկի ազդեցությունը աերոբային թարախային վերքի բորբոքային պրոցեսի ընթացքի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:

Հստեցին՝ Ա. Ղազարյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սաղյանը, անդամներ՝ կ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ս. Ափոյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Ժ. Սարգսյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին հայցորդին հետաքրքիր և բովանդակալից զեկուցման համար և ուղղեցին իրենց հարցերը.

1. Համեմատվել է արդյո՞ք «Արմենիկում» մածուկի հակամանրէային հատկությունները նմանատիպ այլ դեղերի հետ:
2. «Արմենիկում» մածուկի հիմնական բաղադրիչ յոդը ազատ վիճակում է, թե՛ կոմպլեքսի ձևով:
3. Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ 10,2մգ/կգ դեղաչափը համարվել է օպտիմալ և չի փորձարկվել արդյո՞ք դրանից բարձր դեղաչափ:

Հարցերին պատասխանելու համար ձայնը տրվեց հայցորդին:

Պատասխան՝ Հայցորդ Անի Ղազարյանը նշեց, որ Արմենիկում մածուկը համեմատվել է Բետադին քսուրի հետ, քանի որ վերջինիս կազմում ևս հիմնական բաղադրիչը յոդն է: Նա նշեց, որ «Արմենիկում» մածուկի հիմնական բաղադրիչը յոդ-դեքստրին կոմպլեքսն է, որն օժտված է բարձր հակամանրէային, հակավիրուսային ակտիվությամբ: Ա. Ղազարյանը նշեց, որ մինչ օրս կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ 10,2 մգ/կգ դեղաչափը արդեն իսկ համարվում է մաքսիմալ թերապեվտիկ դեղաչափ, այդ իսկ պատճառով փորձարկվել են 10,2 մգ/կգ և դրանից ցածր դեղաչափերը:

Ելույթ ունեցավ նաև հայցորդ Անի Ղազարյանի գիտական ղեկավար ք. գ. դ., պրոֆ. Հ.Վ. Թոփչյանը, ով նշեց, որ ի սկզբանե «Արմենիկում»-ը ցուցված էր ՁԻԱՀ-ի բուժման համար: Ներկայումս այն չի կորցրել իր արդիականությունը և ավելի շատ օգնում է հիվանդության սկզբնական շրջանում՝ փոխելով հիվանդների կյանքի որակը: Այն օգտագործվում է կոմբինացված՝ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի այլ դեղերի հետ միասին: Արմենիկումը նաև իմունախթանիչ է վիրուսային հեպատիտի բուժման ժամանակ, արդյունավետ է հատկապես պառկելախոցերի

բուժման համար: Նա շեշտեց հատկապես այն հանգամանքը, որ այս աշխատանքով կարծես թե նոր կյանք է տրվում «Արմենիկում»-ին:

Ելույթի համար Ա. Սադյանը ձայնը տվեց նաև գրախոս, ք.գ.թ. Խ. Հակոբյանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը: Խ. Հակոբյանը նշեց, որ Անի Վաչագանի Ղազարյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է «Արմենիկում» մածուկում առկա յոդի դեղակլինետիկայի հետազոտմանը տարբեր դեղաչափերով մածուկների դեպքում և մածուկի ազդեցության ուսումնասիրությանը թարախային վերքի բորբոքային պրոցեսի ընթացքի վրա: Վերքային ինֆեկցիայի խնդիրը մինչ օրս չափազանց արդիական է ժամանակակից բժշկության մեջ: Վերքերի բուժման համար առաջարկվող հայկական արտադրության «Արմենիկում» մածուկը հիդրոֆիլ հիմքով բազմաբաղադրիչ քսուր է, որի կազմի մեջ, որպես ազդող նյութ, հանդես է գալիս յոդ-դեքստրին կոմպլեքսը (յոդոֆոր): «Արմենիկում» մածուկի ուղղորդված փորձարկման անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նշված դեղապատրաստուկը դեռ չէր դիտարկվել որպես արդյունավետ բուժիչ միջոց՝ աերոբային և անաերոբային վերքերի բուժման ժամանակ: Նույնիսկ վերքային պրոցեսի փորձարարորեն մոդելավորման պայմաններում չեն բացահայտվել վերքերի լավացման վրա «Արմենիկումի» ազդեցության հնարավոր մեխանիզմները, բացի այդ, հիմնավորված չէր «Արմենիկում» մածուկում առկա ակտիվ բաղադրիչներից մեկի՝ յոդի դեղաչափը:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել և համեմատվել է «Արմենիկում» մածուկի ակտիվ բաղադրիչներից յոդի դեղակլինետիկական առնետների մոտ՝ 10,2մգ/կգ և 5,1մգ/կգ դեղաչափերով ընդհանուր յոդի պարունակությամբ մածուկների դեպքում: Թարախային վերքի առաջացված մոդելի վրա բացահայտվել և պաթոգենետիկորեն հիմնավորվել է «Արմենիկում» դեղապատրաստուկի բուժիչ ազդեցությունը:

Հետազոտությունների հիման վրա հեղինակը ցույց է տվել, որ.

- Դեղակլինետիկական ուսումնասիրությունների տվյալների հիման վրա, առավել օպտիմալ դեղաչափի պարունակության առումով, նպատակահարմար է 10,2մգ/կգ դեղաչափով ընդհանուր յոդ պարունակող մածուկի կիառումը՝ հաշվի առնելով վերքային մակերևույթին յոդի ավելի երկարատև պահպանումը, և հետևաբար, ավելի արտահայտված դեղաբանական ազդեցության դրսևորման հնարավորությունը:
- Թարախային վերքի վրա «Արմենիկում» մածուկի բուժիչ ազդեցությունը, որը դրսևորվում է վերքի վաղ մաքրմամբ պերսիստացող միկրոօրգանիզմներից, մակրոֆագերի և լեյկոցիտների ֆագոցիտար ակտիվության բարձրացմամբ, վերականգնողական-պրոլիֆերատիվ ռեակցիաների ակտիվացմամբ:

- Վերքի վաղ լավացման մեխանիզմում «Արմենիկումի» տեղային կիրառման պայմաններում կարևոր դեր է կատարում *in situ* սինթեզվող ֆիբրոնեկտինը, որի շնորհիվ տեղի է ունենում ֆիբրոպլաստիկ պրոցեսների վաղ ակտիվացում:
- Իրականացվել է մածուկի արտադրական գործընթացի վալիդացում 2015թ. արտադրված երեք խմբաքանակների (50-ական կգ) համար, ըստ միջազգային պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) պահանջների:

Գրախոսը հասկապես կարևորեց այն հանգամանքը, որ հայցորդ Անի Ղազարյանի կողմից կատարված դեղակինետիկական և մորֆոլոգիական ուսումնասիրությունների հիման վրա յոդի հաստատված օպտիմալ դեղաչափով «Արմենիկում» մածուկի՝ ՀՀ-ում գրանցումից հետո ներդրվել է դեղի գործարանային արտադրությունը «Արփիմեդ» ՍՊԸ ընկերությունում: «Արմենիկում» մածուկի *in vivo* պայմաններում հայտնաբերված բուժիչ ազդեցությունը, վերքային մակերևույթին յոդի երկարատև պահպանման հնարավորությունը, դրա տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև թունավորության բացակայությունն աշխատանքային խտություններում, կանխորոշում են դեղապատրաստուկի գործնական կիրառման նպատակահարմարությունը՝ որպես պաթոգենետիկ և սիմպտոմատիկ թերապիայի միջոց թարախային աերոբային վերքերի համալիր բուժման մեջ:Նա հավելեց նաև, որ հեղինակի կողմից հաջողությամբ լուծվել են իր առջև դրված խնդիրները, ատենախոսությունը ձևակերպված է հստակ, գրագետ հայերենով: Անի Վաչագանի Ղազարյանի կողմից ժամանակակից մեթոդներով կատարվել է նպատակային և հետաքրքիր աշխատանք, ատենախոսության արդյունքներն ամփոփված են 6 կետից բաղկացած եզրահանգումներում, որոնք ճշգրիտ և հակիրճ արտացոլում են աշխատանքում ստացված հիմնական գիտական և գործնական տվյալները: Խ. Հակոբյանը նշեց, որ ատենախոսության վերաբերյալ ունի նաև որոշ դիտողություններ.

1. Ատենախոսական աշխատանքի անվանումից հետևում է, որ այն նվիրված է «Արմենիկում» մածուկի ազդեցությանը աերոբային թարախային վերքի բորբոքային պրոցեսի ընթացքի վրա, որը սակայն արտացոլում է աշխատանքի մի մասը և չի ընդգրկում դեղակինետիկայի և արտադրական գործընթացի վալիդացման վերաբերյալ ուսումնասիրությունները: Ճիշտ կլինե՞ր ատենախոսությանը տալ ավելի ընդլայնված վերնագիր, որն արտացոլեր նշված ուսումնասիրությունները ևս:
2. Ուսումնասիրությունները կատարվել են միայն աերոբային վերքերի մոդելավորման պայմաններում, սակայն հետաքրքիր կլինե՞ր նաև հետազոտել «Արմենիկում» մածուկի ազդեցությունը անաերոբային և խառը վերքերի վրա:
3. Գրականության ակնարկում բերված են ԱՂՀ երկրներում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում և Նորվեգիայում վերքային ինֆեկցիայի բարդությունների մասին վիճակագրական տվյալներ և բուժման գումարների վերաբերյալ տեղեկություններ: Հետաքրքիր կլինե՞ր ներկայացնել նաև ՀՀ-ում այդ տվյալները:

4. Ատենախոսության Ամփոփում բաժնում ներկայացված է գծապատկեր, որում արտացոլվում են «Արմենիկում» մաժուկի բուժիչ արդյունավետության հիմնական տեղային և ընդհանուր մեխանիզմները, որտեղ բերված են վերքում սոմատոստատինի, պրոլակտինին և կորտիզոլի պարունակության վրա «Արմենիկում» մաժուկի ազդեցության մեխանիզմները, որոնք սակայն չեն քննարկվել ատենախոսական աշխատանքում:

Ելույթ ունեցողները նշեցին, որ արված դիտողություններն ամեննին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը, այն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՂ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Անի Վաչագանի Ղազարյանն արժանի է ԺԵ.00.01 « Դեղագիտություն» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Նշվեց նաև, որ Ա. Ղազարյանի կողմից կատարվել է ծավալուն գիտական աշխատանք, որն ունի կարևոր կիրառական նշանակություն և առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Հաստատել Անի Վաչագանի Ղազարյանի «Արմենիկում» մաժուկի ազդեցությունը աերոբային թարախային վերքի բորբոքային պրոցեսի ընթացքի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի պաշտոնական կարծիքը:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝

Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից գիտական խորհուրդ է ներկայացվել «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը՝ արտաքին գրախոսման համար: Աշխատանքը քննարկվել է ամբիոնում և մեթոդական խորհրդի նիստում (նիստ №3, առ 04. 04. 2018թ.) և ստացել դրական արձագանք: Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի դոցենտ, ք.գ.թ. Կիմա Պետրոսյանը (կարծիքը կցվում է):

Կ. Պետրոսյանը նշեց, որ աշխատանքում տեղ են գտել որոշ բացթողումներ, որոնք հեղինակի հետ քննարկվելուց հետո շտկվել են: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն և օգտակար կլինի ուսանողների համար՝ հմտորեն կատարելու բնական միացությունների քիմիա առարկայի փորձնական աշխատանքները:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Միմոնյանը, Ս. Պետրոսյանը, ովքեր կարևորեցին ուսումնամեթոդական աշխատանքի անհրաժեշտությունը, առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին աշխատանքն արտաքին արտաքին գրախոսման ուղարկել ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ:

Որոշեցին՝ (միաձայն) Ա. Մկրտչյանի կողմից ներկայացված ուսումնամեթոդական աշխատանքը արտաքին գրախոսման ուղարկել «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ:

3. 2017-2018 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ ամփոփվել են 2017-2018 ուս. տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքները: Նա նշեց, որ սոց. հարցման ընդհանուր արդյունքներով Ֆարմացիայի ինստիտուտի գնահատականը չորս ամբողջ յոթանասունչորս միավոր է: Դասախոսների միջին գնահատականը բարձր է 4,5-ից, կան դրանից ցածր գնահատականների մի քանի դեպք, որոնք պետք է քննարկվեն համապատասխան ամբիոնների վարիչների կողմից՝ պատճառները պարզելու համար: Քանի որ սոցհարցումն անց է կացվում առցանց տարբերակով, ուստի հնարավոր չէ վերահսկել բոլորի մասնակցությունը: Ա. Սաղյանը կարևորեց հատկապես այն հանգամանքը, որ ուսանողները գոհ են դասավանդման որակից, լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունից, ինչը հատկապես կարևոր է լաբորատոր դասերի ժամանակ մատուցվող նյութի հեշտ և պատկերավոր ըմբռնման համար: Ուսանողները բարձր են գնահատում ինստիտուտի դասախոսական անձնակազմի մասնագիտական կարողությունները, իրենց գոհունակությունն են հայտնում նաև գրասենյակի աշխատակիցներին՝ քարյացկամ վերաբերմունքի համար:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. Ընթացիկ հարցեր:

4.1 «Երևանի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» փաստաթղթում լրացումներ կատարելու մասին:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ ք.գ.թ. Ս. Պետրոսյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ավարտական աշխատանքի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի նախագիծը, որը կազմվել է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» փաստաթուղթը (Նախագիծը կցվում է): Նա տեղեկացրեց նաև, որ

հավելվածը կազմելիս առաջնորդվել են «Ֆարմացիա» մասնագիտության առանձնահատկություններով: Ս. Պետրոսյանը նշեց, որ հավելվածի նախագիծը քննարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ միջամբիոնային նիստերում և ստացել դրական արձագանք:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ կ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ովքեր նշեցին, որ վերոնշյալ փաստաթղթում կատարված լրացումներն անհրաժեշտ են հատկապես Ֆարմացիայի ինստիտուտում կատարվող ավարտական աշխատանքների բովանդակությունն առավել հստակ և մանրակրկիտ ներկայացնելու համար: Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել ավարտական աշխատանքի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի նախագիծը և ավարտական աշխատանքների ձևակերպման ժամանակ առաջնորդվել հավելվածում ներկայացված դրույթներով:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել ավարտական աշխատանքի ձևավորման և պաշտպանության կարգի հավելվածի նախագիծը:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան